

# ՄԱՀԳՈՅԺ

Մ Ա Կ Ա Ր Ե Ք Մ Ա Լ Ե Ա Ն

Մարտի 6-ին Թիֆլիսի Հայկաբար թաղում երկարատև հանրական հիւանդութիւնից յետոյ վախճանուեց երաժշտագէտ Մակար Երմալեանը 50 տարեկան հասակում։

Թէ ովք էր Երմալեանը և ինչով էր նա յայտնի հայ հասարակութեամ՝ մենք երկար կանգ չենք առնում այդ ինդիրների վերայ. այդ կարելի է բացատրել միայն մի քանի խօսքով. — Մակար Երմալեանը հինգամի ու տարածողն էր Հայոց եկեղեցական քառաձայն երգեցողութեան. նա առաջինը ներդաշնակեց և մաքրեց Ռուսիայի հայ եկեղեցիներում չորս ձայնով երգելը, որը միաժամանակ աւանդելով ներսիսան Հայոց դպրոցում, կազմեց 80 հոգուց բաղկացած մի անօրինակ երգեցիկ խումբ, որ երգում էր Վանքի Մայր եկեղեցում և գրաւում դէպի ինքը անթիւ հայ ժողովուրդ և բաղմաթիւ օտարազգի այցելուներ, զարդեցնելով նոցա մէջ հիացում և գեղարուեստական հետաքրքրութիւն։ Նորա աշակերտաները տարիների ընթացքում ցրուելով գաւառները տարածեցին ամենուրեք Երմալեանի ներդաշնական երգեցողութիւնը, կազմեցին քառաձայն խմբեր և այժմ չկայ մի փոքր ի շատէ յայտնի կենտրոն, ուր երգելիս չլինի այդ շկոլայով պատրաստած լաւ թէ վատ մի խումբ։ Կարող ենք ասել, որ Երմալեանը եղել է ոտսահայ ժողովի բարեպաշտական զգացման ջերմ արծարծողը դէպի հայրենի եկեղեցին, ապա ուրեմն և մեծ է նորա կատարած գործը և գնահատութեան արժանի։ Եւ նորան թաղեցին չտեսնուած մի հանդէսով։

Բայց կարդացի՞ք Դուք «Մշակում պ. Յ. Ս.-ի և «Ճարագում» Մելիք Ադամեանի նամակիները ժողովուրդն իմացաւ թէ ինչ տանջանալից կեանք է վարել Երմալեանը իւր կենդանութեան ժամանակի նորան հալածել են, տարիներ շարունակ հալածել իւր արդինաւաւ ուսուցչութեան ժամանակ, խզել են ամեն յարաբերութիւն նորա հետ, ստիպել տարիներով դասամիջոցներին ուսուցչանոց չմտնել, այլ տանջուել զանազան նախասենեակներում և ծառաների սենեակում։ և այս ամենը ինչ որ երեակայական յանցանքների համար, Սակայն բաւ է մեղերկարել այս մասին, թող խօսեն երկարամեայ բանգէտ բարտուղարը և պաշտօնական անթիւ գրագրութիւններ։

Երմալեանը խելազարուեց հէնց դասի ժամանակ։

Հանդիսած քո հաւածուած անձի ամիսին, երջանիկ հոգի, Քո յիշատակը կմնայ, մինչև որ կանգուն կայ Հայ եկեղեցին, ուրեմն յաւիտեան։

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԻԼԵԱՆ

Նորերս Բոլղարիայի Սոֆիա քաղաքի շրջակայքում մեռաւ մեր երիտասարդ շրջաններում յայտնի Քրիստափոր Միքայէլեանը, Հանգուցեալը ագուկեցի էր, աւարտել էր Թիֆլիսի ուսուցչական դպրոցը, յետոյ, մի առ ժամանակ Մոսկվայում շարունակելով ուսումը, վերադարձել էր Կովկաս և ուսուցչու-

թեամբ էր պարապում հայ գպրոցներում. նա յայտնի էր իբրև ընտիր դասատու: Հայ դպրոցների փակումից յետոյ Միքայէլեանին պաշարեց անբուժելի վիշտու Այնուհետև նա պարապում էր մասնաւոր դասերով և երբեմն Թիֆլիսի ոռու և հայ լրագիրներում գրում էր հասարակական լուրջ նշանակութիւն ունեցող յօդուածներ:

Հանգուցեալը գրական յայտնի ոյժ չէր. ասպարէզի վերայ փայլող հասարակական գործիչներից չէր: Նա պատկանում էր իւր դաւանած գաղափարներով իւր ձգտումներով և գործունէութեամբ այն համակրելի սակաւաթիւ աշխատաւոր շարքին, որոնք աւելի հեռաւոր միտումներ ունեն հայ ազգի վիճակի վերաբերմամբ, իբրև անհատ Միքայէլեանը վերին աստիճանի սիրելի էր այն բոլոր շրջաններում, որոնք գէթ մի անգամ տեսել էին նրան:

Թիֆլիսի հստելլիքնցիան և երիտասարդութիւնը յարգեց հանգուցեալի յիշատակն երկու բազմամարդ հոգեհանգիստներով, որոնց ժամանակ խօսուցին ճառեր ոչ միայն հայերի, այլ և վրացիների և ոռուների կողմից:

Շ.

### ՍԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ

Անցեալ փետրուարի 14-ին Պարիզում վախճանուեցաւ յայտնի գրագէտ և հրապարակախօս Միմէօն Հախումեանը 46 տարեկան հասակում, երկու տարուայ խելազարութիւնից յետոյ:

Հախումեանը երկար տարիներ գործել է Հայ մամուլի մէջ. նա աշխատակցել է «Մեղու Հայաստանի», «Արձագանք», «Նորդակար» և «Տարազ» լրագրներին, երկու անգամ փորձել է անձամբ խմբագրել հայ ամսաթերթ առաջինը՝ «Գործ» անունով Շուշում, որի միայն երկու համարը լոյս տեսաւ, իսկ վերջին տարիները՝ «Ժամանակ» Պարիզում, բայց երկում էլ անյաջող իրանից բոլորովին անկախ պատճառներով:

Բայց Հախումեանի արժանիքը ոչ թէ այն է, որ նա երկար տարի գործել է իբրև լրագրող և հրապարակախօս, այլ որովհետև նորա գրիչը միշտ և ամեն տեղ բուրել է մաքուր հայկական հոգի, անօրինակ և անձնուէր սէր դէպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականութիւնը, որովհետև նորա գրուածները դիւթիչ էին, անկեղծ սրտից բղխած, տպաւորիչ, սուը և շախչախիչ:

Դժբաղստաբար նաև ենթարկուեց ընդհանուր հայ գրողների վիճակին, քանի մի տարի ապրեցաւ Պարիզում յետին կարօտութեան մէջ, վերջին տարիներս ստացաւ հոգեկան անբուժելի հիւանդութիւն և մեռաւ տակաւին այրական հասակում, երբ նորա տաղանդը հասել էր գագաթնակէտին և խոստանում էր հայ գրականութեան առաւել լուրջ ու արդիւնաւէտ մասնակցութիւն:

Հանգիստ ուկերաց արդիւնաւէտ հայ գործչին.

ՀԱՅ